


ПРАВО

Արդարադատությունը հին և միջնադարյան Հայաստանում

Մաֆարյան Գառնիկ Հ.

Երավարանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի գլխավոր գիտաշխատող (Երևան, ՀՀ)

 <https://orcid.org/0009-0008-0964-2970>

marineeghiazaryan@mail.ru

Ստեփանյան Նորայր Վ.

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և Երավունքի ինստիտուտի ասպիրանտ (Երևան, ՀՀ)

 <https://orcid.org/0009-0007-6099-0447>

stepanyan-norayr@mail.ru

ՀՏԳ՝ 340(479.25); EDN: EMXCPF

DOI: 10.58587/18292437-2024.6-33

Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝ Հին և միջին դարեր, արդարադատություն, «սրբազան օրենքների երկիր», աշխարհիկ դատարան, եկեղեցական դատարան, դատական համակարգ, դատական իշխանություն

Правосудие в древней и средневековой Армении

Сафарян Гарник Г.

доктор юридических наук, профессор,

главный научный работник Института философии, социологии и права НАН РА (Ереван, РА)

Степанян Норайр В.

аспирант Института философии, социологии и права НАН РА (Ереван, РА)

Аннотация. В настоящей статье авторы систематизированной методологией всесторонне изучили характерные черты правосудия в древней и средневековой Армении.

В ассирийско-шумерских источниках древнейшую армянскую государственность – Аратту изображают как “страну божественных священных законов”.

Иностранная оценка “страна священных законов” имеет также значение характеристики правосудия данной страны, из которой можно заключить, что судебные споры разрешались на основании этих “священных законов”. Как отмечают исследователи: “Система обычного права здесь (в Аратте – авт.), все еще опиралось на обожещенный авторитет и соблюдение традиций, которые обеспечивали претворение обычаев в жизнь практически всеми членами общества. Следовательно, в Аратте основным методом воплощения общественных норм в жизнь являлось убеждение, сформированное путем религиозной социализации, а не принуждение”.

В древнейшие времена, как мы увидели в предыдущем изложении, подвластность какой-либо власти над людьми должна была быть обусловленной либо военно-экономическим, либо религиозным фактором (фактором вероисповедания). Согласно последнему, правящий царь назначен богами и является их заменяющим и исполнителем их воли на земле. В Аратте подобной властью был наделен верховный жрец – царь, который считался также верховным судьей страны.

Так как в древнейший период органы правосудия не были отделены от административных органов, то можно предположить, что преступления небольшой тяжести и разрешение гражданско-правовых споров были отнесены к компетенции нижних органов управления (управляющих).

В Армении практически такая же система действовала во время царства Хайаса-Аззи, всеармянского государства Вана (Наири, Биайнили, Урарту, Арарат), царств Айкидов, Ервандидов, Арташесидов и Аршакидов.

Однако, когда в 301 году христианство в Армении было признано государственной религией, когда христианская доктрина стала государственно-официальной идеологией, начиная с этого времени постепенно формировались мирско-правовая и религиозно-правовая системы и в соответствии с ними мирской суд и духовно-религиозный суды со своими компетенциями.

Систему органов правосудия в средневековой Армении составляли: а) государственные или мирские, б) церковные или духовные суды.

Ключевые слова и словосочетания: Древние и средние века, правосудие, “Страна священных законов”, мирской суд, церковный суд, судебная система, судебная власть

The Justice in Ancient and Medieval Armenia

Safaryan Garnik G.

Doctor of Juridical Science, Professor; Chief scientific officer of Institute of Philosophy, Sociology and Law of National Academy of Sciences of the Republic of Armenia (Yerevan, RA)

Abstract. In this article the authors under systematized methodology had comprehensively examined the characteristic features in ancient and medieval Armenia.

In the Assyrian and Sumerian sources, the ancient Armenian statehood describes Aratta as “country of sacred laws”. The foreign appreciation of “country of sacred laws” also has the significance of the characteristics of justice of the given country, from which it can be concluded that judicial disputes were resolved based on these “sacred laws”. As the researchers note: “The system of customary law here (in Aratta, author) was still based on sanctified authority and tradition, which ensured the living of customs by almost all members of the society. Therefore, the main method of implementing social norms in Aratta was belief formed through religious socialization, not coercion.

In ancient times, as we saw in the previous description, the subordination of any authority upon the people had to be conditioned by either a military-economic or a religious (faith) factor. According to the latter, the ruler-king is appointed by the Gods and is their substitute and executor of will on earth. In Aratta, the high priest-king, who was also considered the supreme judge of the country, was endowed with such power.

As in the ancient period the justice bodies were not separated from the administrative bodies, it can be assumed that minor crimes and the settlement of civil legal disputes were reserved to the jurisdiction of the lower state administration bodies (governors).

Almost the same judicial system operated in Armenia during the Hayasa-Azzi kingdom, the Pan-Armenian state of Van (Nairi, Biaynili, Uratu, Ararat), the kingdoms of the Haykazunis, Eruandids, Artashesian and Arshakuni.

However, when Christianity was adopted as the state religion in Armenia in 301, when the Christian doctrine became the state-official ideology, since that period, the secular-legal and religious-legal systems and their respective secular judicial and spiritual-religious courts with their powers were gradually formed.

The following formed the system of justice bodies of Armenia in the medieval era; a) state or secular, b) church or spiritual courts.

Keywords & phrases: ancient and middle ages, justice, “country of sacred laws”, secular court, church court, judicial system, judiciary

Նախաբան

Արդարադատությունը և արդարադատությունը, որպես անքակտելի գույգ կատեգորիաներ, շատ բնութագրական է հայ ժողովրդի ինքնությանը և իրավագիտակցությանը: Այս առումով խիստ ուսանելի է հին և միջնադարյան հայ արդարադատությունը. որի ուսումնասիրությունն ունի և՛ տնտեսական, և՛ պատմամանաչողական, և՛ գործնական նշանակություն:

Հոդվածը շարադրված է սկզբնաղբյուրների և մասնագիտական գրականության հիմնա վրա:

Սույն հետազոտության արդյունքները կարող են օգտակար լինել Հայաստանի Հանրապետությունում դատաիրավական բարեփոխումների աշխատանքների իրականացման համար:

Հիմնական բովանդակությունը.

Հայաստանը հնագույն քաղաքակրթություններից է, որը սեպագիր արձանագրություններում համարվում է «Սրբազան օրենքների երկիր» [2; 3]: «Սրբազան օրենքների երկրում», անշուշտ, պետք է գոյություն ունենար նաև արդյունավետ արդարադատություն և արդարադատության մարմիններ: Մ.թ.ա. 3-րդ հազարամյակի սկզբներին հայկական հնագույն պետությունը Արատան էր [12]: Այդ շրջանի պատմության սկզբնաղբյուրների մեջ հայտնի է շումերական դյուցազնավեպը, որը տեղեկություններ է պարունակում Արատտա երկրի մասի: Հենց ասուրաշումերական արդյունքներում Արատ-

տային պատկերում են որպես «աստվածային սուրբ օրենքների երկիր»:

«Սրբազան օրենքների երկիր» օտարերկրյա գնահատանքը ունի նաև տվյալ երկրի արդարադատության բնութագրի նշանակություն, որից կարելի է եզրակացնել, որ դատական վեճերը լուծվում էին այդ «սրբազան օրենքների» հիման վրա: Ինչպես նշում են հետազոտողները: «Սովորույթային իրավունքի համակարգն այստեղ (Արատտայում՝ հեղ.) դեռ հենվում էր սրբազան հեղինակության և ավանդապտության նրա, որոնք սպառնում էին սովորույթների կենսագործումը հասարակության գրեթե բոլոր անդամների կողմից: Հետևաբար, Արատտայում հասարակական որմերի կենսագործման հիմնական մեթոդը կրոնական սոցիալիզացիայի միջոցով ձևավորված համոզմունքն էր, այլ ոչ թե հարկադրանքը» [8, էջ 19]:

Հնագույն ժամանակներում, ինչպես նախորդ շարադրանքում տեսանք, մարդկանց նկատմամբ որևէ իշխանության ենթակայությունը պետք էր պայմանավորված լիներ կամ ռազմական-տնտեսական կամ էլ կրոնական (հավատքի) գործոնով: Վերջինիս համաձայն՝ իշխող-թագավորը նշանակված է աստվածների կողմից և նրանաց փոխարինողն ու կամքի կատարողն է երկրի վրա: Արատտայում այդպիսի իշխանությամբ էր օժտված քրմապետարքան, որը համարվում էր նաև երկրի գերագույն դատավորը:

Պատմական աղբյուրները չափազանց ուշագրավ տեղեկությունն են պարունակում Արատտայի կառավարման համակարգի և արդարադատության մարմինների մասին: Ինչպես նշեցինք, գերագույն դատավորը քրմապետարքան էր, որն իր ձեռքում էր կենտրոնացրել օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունը:

Արքայական արդարադատությունը ենթակա էին միայն առավել ծանր հանցագործությունների քննումը, մասնավորապես՝ պետական դավաճանության, ապստամբությունների (խռովությունների) կազմակերպման, դիտավորման սպանությունների գործերը:

Արքային կից գործում էր երկրի բարձրագույն խորհրդակցական մարմինը՝ Ավագների ժողովը [13, էջ 23], որը գումարվում էր երկրի համար առավել նշանակալի հարցերը քննարկելու, ինչպես նաև արդարադատություն իրականացնելու համար, որոնք կատարվել էին պաշտոնա-ար անձանց կողմից:

Քանի որ հնագույն ժամանակաշրջանում արդարադատության մարմինները տարանջատված չէին վարչական մարմիններից, ապա կարելի է ենթադրել, որ ոչ մեծ ծանրության հանցագործությունները և քաղաքացիաիրավական վեճերի լուծումը վերապահված էր պետական կառավարման ստորին մարմինների (կառավարիչների) իրավասությանը:

Հայաստանում գրեթե նույն դատական համակարգն է գործել Հայասա-Ազգի թագավորության, Վանի (Նաիրի, Բիայնիլի, Ուրատու, Արարատ) համահայկական պետության, Հայկազուն Երվանդականների, Արտաշեսյանների և Արշակունիների թագավորությունների ժամանակ [16]:

Սակայն, երբ 301 թվականին քրիստոնեությունը Հայաստանում ճանաչվեց որպես պետական կրոն, երբ քրիստոնեական վարդապետությունը դարձավ պետական-պաշտոնական գաղափարախոսությունը, այդ ժամանակաշրջանից սկսած աստիճանաբար ձևավորվեցին՝ աշխարհիկ-իրավական և կրոնական-իրավական համակարգերը և դրանց համապատասխան՝ աշխարհիկ դատական և հոգևոր-կրոնական դատարանները՝ իրենց իրավասություններով հանդերձ:

Ճիշտ է, դրանք չինական պարսպով մեկը մյուսից անջատված չէին սակայն օժտված էին որոշակի ինքնավարությամբ ու ինքնուրույնությամբ, որն առավել ցայտուն դրսևորվեց միջնադարում և նրա իրավաքաղաքական գաղափարախոսությունում¹:

Միջնադարյան դարաշրջանի Հայաստանի արդարադատության մարմինների համակարգն

էին կազմում. ա/ պետական կամ աշխարհիկ, բ/ եկեղեցական կամ հոգևոր դատարանները: Նշվածը հաստատվում է մեզ հասած սկզբնաղբյուրներով [4, էջեր 20-36; 6, էջեր 290, 304; 18, էջեր 138-139; և այլք]: Մինչ նշված դատական համակարգերի վերլուծությանն անցնելը, հարկ է նշել, որ միջնադարի Հայաստանի դատական համակարգի, դրա կառուցվածքի, հոգևոր և աշխարհիկ դատարանների առաջնայնության, դրանց ընդդատության վերաբերյալ հայագիտության մեջ եղել են և կան տարբեր, նույնիսկ իրարամերժ տեսակետներ: Այսպես, հայագետների մի մասի կարծիքով, միջնադարյան Հայաստանում արդարադատության իրականացումը եղել է հայ հոգևորականության մենաշնորհը, աշխարհիկ տերերը կամ չեն ունեցել դատական իշխանություն, կամ էլ երկրորդական է եղել նրանց դերը խնդրոքնագավառում [1, էջ 191; 4, էջեր 126, 132 և այլն; 9, էջեր 246-248; 14, էջեր 45-46; 15, էջեր 117-126]: Ակադ. Հակոբ Մանանդյանի կարծիքով «մեծի դատաւորութեանն» «գործակալութիւն»-ը հանձնված է եղել հոգևորական բարձր իշխանության [9, էջ 246], իսկ Նիկողայոս Ադոնցի կարծիքով, նախաքրիստոնեական Հայաստանում դատական իշխանությունը գտնվել է հոգևորականության՝ թուրմերի ձեռքում, իսկ քրիստոնեության ընդունումից հետո այդ իշխանությունը անցել է եկեղեցուն և հանձնվել է ամեն մի շրջանում համապատասխան եպիսկոպոսին [1, էջ 192]:

Իրավաբան-պատմաբաններից Ա. Սուքիսյանը, Խ. Թորոսյանը իրավագիտորեն գտնում են, որ միջնադարյան Հայաստանում գոյություն են ունեցել ինչպես աշխարհիկ, այնպես էլ հոգևոր դատարաններ [25, էջեր 238-248; 26]: Սակայն աշխարհիկ և հոգևոր դատարանների փոխհարաբերությունը, դրանց իրավագործությունը միշտ կախված է եղել երկրի քաղաքական իրադարձություններից և, մասնավորապես, աշխարհիկ և հոգևոր իշխանությունների ուժերի ռեալ հարաբերությունից: Այս տեսանկյունից, չի կարելի չհամաձայնել պրոֆ. Խ. Սամուելյանի հետ, ըստ որի «Հայ թագավորների ու իշխանների քաղաքական իշխանության անկմամբ բնականաբար ընդհատվում էր նաև աշխարհական իշխանությունների իրավական դատաստանական գործունեությունը և, ընդհակառակն, այդպիսի պատմական մոմենտներում հոգևոր իշխանությունը ոչ միայն պահպանում էր իր առանձնահատուկ հասարակական ուժը, այլև շատ անգամ ձեռք էր բերում համեմատաբար ավելի լայն իրավունքներ, քան որոնցով նա օժտված էր հայ քաղաքական ինքնուրույն կյանքի ժամանակ» [15, էջ 123]:

Ժ-ԺԳ դարերի դատական համակարգերի մասին հայագիտության մեջ գոյություն ունեն հետևյալ տեսակետները. ըստ գերմանացի

¹ Մանրամասն տե՛ս [22]:

գիտնական Յոզեֆ Կարստի Բագրատունյաց թագավորությունում կար հետևյալ դատական համակարգը, բարձրագույն թագավորական դատարան, գավառի իշխանական /իշխանի դատարան, տանուտերի /ավագանու/ դատարան և եպիսկոպոսի դատարան:

Թագավորական իշխանության անկման և օտարների տիրապետության ժամանակ կային հետևյալ դատարանները, կաթողիկոսական կամ կաթողիկոսի դատարան, եպիսկոպոսի դատարան, գավառական դատարան և գյուղական ավագանու դատարան [28, էջեր 357-358]: Իս. Սամուելյանը գրում է, որ ըստ «Մխիթար Գոշի Դատաստանագիրքը զանազանում է երկու տեսակ դատաստան մարմնավոր, աշխարհական և հոգևոր, եկեղեցական: Առաջին դատաստանը գտնվում էր թագավորի, իշխանների և ընդհանրապես աշխարհական վարչական անձանց իրավասության ներքո, իսկ երկրորդը՝ եպիսկոպոսների, վարդապետների և քահանաների» [15, էջ 117]: Պրոֆ. Ա. Սուքիասյանի կարծիքով նշված ժամանակաշրջանում գոյություն է ունեցել հետևյալ դատական համակարգը, «Թագավորի, որպես պուզերենի, դատարանը... իշխանների /վասալների/ համաժողովը, որը կարող է գահընկեց անել և արտոնել իր կողմից ընտրված թագավորին... իշխանների և ազատների համաժողովը» [17, էջեր 203-204]: Ըստ նրա հոգևոր դատարաններն էին եկեղեցական ժողովը, կաթողիկոսական դատարանը, եպիսկոպոսական դատարանը, ծխական քահանայի դատարանը և վարդապետական դատարանը [17, էջեր 207-208]:

Միջնադարյան Հայաստանի դատական համակարգի, դատարանակազմության մասին ամենից հանգամանորեն ուսումնասիրել է իրավագիտության դոկտոր, պրոֆ. Խոսրով Թորոսյանը, որը հանգել է հետևյալ եզրակացության, «զարգացած ֆեոդալիզմի դարաշրջանում Հայաստանում կային հետևյալ դատարանները.

- թագավորական դատարան
- թագավորին կից դատարան
- իշխանական դատարան
- իշխանին կից դատարան

ստորին դատարաններ /գավառական դատավորներ, գյուղական ավագանի և այլն/, դասային դատարան տերունական դատարան» [26, էջ 68]:

Վերք նշվածը աշխարհիկ դատական համակարգն է, իսկ հոգևոր դատական համակարգը ըստ Իս. Թորոսյանի հետևյալն է.

- «կաթողիկոսի դատարան
- եպիսկոպոսի դատարան
- վարդապետի դատարան
- քահանայի դատարան» [26, էջ 86]:

Ընդհանուր առմամբ համաձայնելով Իս. Թորոսյանի վերը նշված դասակարգմանը, այնուամենայնիվ, նշված աշխարհիկ դատական

մարմինների համակարգը, մեր կարծիքով, այնքան էլ համոզիչ չէ և առարկության տեղիք է տալիս: Թագավորական դատարանի գոյությունը Բագրատունյաց թագավորության ժամանակաշրջանում անժխտելի փաստ է: Այդ են վկայում պատմական փաստերը: Թովմա Արծրունին ու պատմության շարունակողը Անանուն Պատմիչը գրում է. «Նա /Գագիկ թագավոր/ արդարությամբ էր կատարում իրավունքն ու դատաստանը» [5, էջ 155]: «Երբ Աշոտ իշխանը հասավ արքունիք, նրա ոտքերը կապել-տվեցին կրկնակի շղթաներով և դրեցին բանտի մեջ: Ապա արքան սպառազեն զինվորներին հրամայեց պահել նրան, մինչև ինքը կնստի դատաստանի, նրանց կնոցնի ստոյան՝ հարցու-փորձի և կքննի այն գործերը, որ կուտակել դրել էին իշխանի վրա» [5, էջ 306]²:

Թագավորական դատարանի մասին հիշատակում է նաև Մխիթար Գոշի Դատաստանագիրքը. «Իսկ երկրորդ նմին կարգեացուք գրաստաստան թագաւորի եւ իշխանաց եւ ամենայն աշխարհականաց» /Դատ., էջ 299/: Ճիշտ է, Գոշի ժամանակ Հայաստանում չկար թագավորություն, այնուհանդերձ, գիտակցելով այդ ամենը, դատաստանագիրքը իրավական հող էր նախապատրաստել վերականգնվել լիք հայոց թագավորության համար:

Այսպիսով, աշխարհիկ դատարանների համակարգը գլխավորում էր թագավորական դատարանը կամ արքունի ատյանը:

Աշխարհիկ դատարանների երկրորդ ատյանն էին կազմում իշխանական իշխանաց իշխանի, ավագ և կրտսեր իշխանների/դատարանները: Այս կարգի դատարանների մասին հիշատակում է Մխիթար Գոշի Դատաստանագիրքը, որը, բացի վերոնշվածից պարունակում է նաև մի շարք հոդվածներ այս դատարանի վերաբերյալ: Ահա դրանցից մեկը, «Իշխանաց մի լիցի գապանողսն սպանանել առանց հրամանի թագաւորաց, իսկ զգողսն խրատել իշխան լիցի» /Դատ., էջ 311/:

Իշխանական դատարանների վերաբերյալ տեղեկություններ են տալիս նաև դարաշրջանի հայ պատմիչները [5; 10, էջեր 69-70; 19, էջեր 248, 251, 257-256, 271-272, 294 և այլք]:

Աշխարհիկ դատական համակարգի երրորդ աստիճանն է կազմում ազատների դատարանը, որի մասին հիշատակում է Գոշի Դատաստանագիրքը. «Եւ ազատ առանց հրամանի իշխանի մի իշխեսցէ զգողսն խրատել» /դատ., էջ 311/:

Գավառական դատարանի մասին Դատաստանագրքում կան բազմաթիվ հոդվածներ: Ահա դրանցից երկուսը. «Շինականաց խրատացի է տասանորդել օտարացն ի կյօել պտողոցն, որ ոչ

² Թագավորական դատարանի մասին տես նաև [18, էջեր 138-139 և այլք]:

իրենց հիմնականում, այնպիսի՝ որոշակի սահմաններում և ըստ խնդրի նոցի կամ օրենքի» /Գատ., էջ 327/, «Եւ եղէ գտանիցի վիրաւոր յերկրի քում գոր Տէր Աստուած քո տացէ քեզ ժառանգել, անկեալ ի դաշտի, եւ ոչ գիտիցին զայրն, որ խոցեացն զնա: Ելցէ ձերակոյտն քո եւ դատաւորքն քո եւ չարեացն շարք զվիրաւորան զվայրս քաղաքացն, եւ երկրի քաղաք քո հուպ իցէ ի վիրաւորն տացէ ձերակոյտ քաղաքին այնորիկ երինջ մի յարջաւոց, այլօրն»/Գատ., էջ 383/:

Այսպիսով, արձանագրենք ևս մի աշխարհիկ դատարան՝ ձերակոյտ կամ ավագների խորհուրդ, որը կազմում էր աշխարհիկ դատական համակարգի ամենաստորին օղակը: «Շերոց ատյանի» մասին վկայություն կա նաև Գոշի առակներից մեկում. «Պղնձագործ և երկաթագործ ի խնամենայն՝ աղուեստիւ ճոխարանէին. և ի լինել հակառակութեանն յատեան ևս երթային ձերոց: Եւ նորա մեծարգոյ ցուցին զերկաթագործ ասելով, թէ հասարակաց օգտակարն պատուական է» [11, էջ 122]: Ինչպես երևում է Դատաստանագրքի հոդվածներից, առակից և համաքարությունների մասին ավելի ուշ շրջանի վկայություններից, կարելի է եզրակացնել, որ «ձերոց ատյանը» քննում էր այն վեճերը, - որոնք ծագում էին համաքարություններում նրանց անդամների միջև կամ էլ երկու համաքարությունների միջև:

Համաքարություններն ունեին իրենց կանոնները, համենայնդեպս մեզ է հասել Երզնկայի 1280 թ. կանոնները /«Սահմանքը»/, որոնք իրենց բնույթով համընկնում են ԺԷ-ԺԹ դարերից մեզ հայտնի հայկական համաքարությունների կանոնների հետ: Նշված կանոնները ի թիվս այլ հարցերի կոչված էին ապահովելու բոլոր եղբայրների համագործակցությունը և լուծելու նրանց միջև ծագած վեճերը [7]:

Ինչպես տեսնում ենք, թագավորին կամ արքունիքին կից, իշխանաց իշխանին կամ իշխանին կից դատարանների մասին աղբյուրները չեն հիշատակում, իսկ աղբյուրներում հիշատակված ավագ դատավորներ և դատավորներ տերմինների մասին կարելի է ասել հետևյալը, աղբյուրների սուղ վկայությամբ, ամենայն հավանականությամբ ավագ դատավորները գործել են թագավորական դատարանում, արքունի դիվանում և իշխանական /իշխանաց իշխանի, ավագ իշխանի դատարաններում, իսկ դատավորները՝ ազատների և գավառական դատարաններում: Դատավորները գործել են հենց այդ դատարաններում և նրանց իրավագործության սահմաններում, հետևաբար նրանք չեն կազմել ինքնուրույն դատական ատյաններ կամ մարմիններ, ինչպես պնդում է Խ. Թորոպյանը: Այդպես էր ոչ միայն ավատատիրական Հայաստանում, այլև ավատատիրական գրեթե բոլոր պետություններում մինչև ԺԴ դարը [20; 21, էջեր 213-528; 23, էջ 125; 24; 27, էջեր 112-221], երբ

Արևմտյան Եվրոպայի ֆեոդալական երկրներում սկսեցին ձևավորվել վարչական մարմիններից առանձին դատական ատյաններ:

Աշխարհիկ դատարաններն ընդդատյա էին թագավորի, իշխանների, ազատների, հողատերերի ու գյուղացիների փոխադարձ հարաբերությունների ու պարտավորությունների, հարկային, պետական-հարկային և տերունական-ենթակայական հարաբերությունների, զինապարտության, պատերազմական ավարի բաժանման, գույքային և ոչ գույքային հարաբերությունների, առուվաճառքի կարգավորման, աշխատանքի անվտանգության պահպանության, դավաճանության, լրտեսության, սպանության, գողության, մարմնական վնասվածքների պատճառման և համանման այլ գործերը:

Ինչպես նշեցինք, դատական մյուս համակարգը եկեղեցական-հոգևորական դատարաններն էին: Հայ իրավունքի պատմության մեջ հոգևորականությունը եղել է դատական իրավասության միակ կրողը այն բոլոր դեպքերում, երբ բացակայել է պետականությունը:

Ըստ Մխիթար Գոշի Դատաստանագրքի եկեղեցական դատական մարմիններն են. եկեղեցական ժողովը, կաթողիկոսական դատարանը, եպիսկոպոսական դատարանը, վարդապետական դատարանը և ծխական քահանայի դատարանը:

Դատաստանագրքի «Նախադրության» ժ գլուխը խոսելով Դատաստանագրքի աղբյուրների մասին, նշում է նաև, որ եկեղեցական ժողովը ոչ նիայն ընդունում էր կանոններ /«կանոնական գրոց»/, այլ նաև արդարադատություն էր իրականացնում. «ի կանոնական գրոց զի եւ անդ ոչ միայն զօրութեամբ գտանի դատաստան, այլ ելյայտնի դատաստան իսկ ի բազում տեղիս. Զանգի կանոնաց հրամանք է ի տարւոջն երկիցս անգամ ժողով լինել եւ քննել թէ յաշխարհի տրագոյն ինչ իրք յայտնիցին, այնորիկ սահմանս եւ կանոնս հաստատել եւ ուղղել» /Գատ., էջ 65-67/:

Եկեղեցական դատարանների երկրորդ ատյանը, ինչպես նշել ենք, **կաթողիկոսական դատարանն** էր կամ «գործակալութիւն մեծի դատաւորութեան», որը գլխավորում էր հայոց քահանայապետը՝ կաթողիկոսը: Այն մշտական գործող դատական մարմին էր՝ եպիսկոպոսների մասնակցությամբ: Այս դատարանի մասին բազմաթիվ հիշատակումներ կան Գոշի Դատաստանագրքում: Մասնավորապես, Դատաստանագրքի առաջին մասի 1-ին հոդվածում նշված է. «Եւ զի այժմ ոչ ունինք թագաւոր եւ իշխան զի այսպիսի բարեկարգութիւն ի ձեռս նոցա լիցի, զայսոսիկ ի հայրասպետէ մերմէ լցուք, զի նա է գլուխ դատաւորաց եկեղեցւոյ» /Գատ., էջ 82/:

Եկեղեցական դատարանների համակարգում իր ուրույն տեղն ունեւ **եպիսկոպոսական**

դատարանը: Այս դատարանը նույնպես կոլեգիալ մարմին էր և գործը քննում էր վարդապետատենակալների կամ գիտնական քահանաների և տանուտերերի մասնակցությամբ: Եպիսկոպոսական դատարանի մասին նույնպես բազմաթիվ հոդվածներ կան Գոշի Դատաստանագրքում: Բերենք դրանցից մեկը. «Իսկ զեկեղեցւոյ դատաստան եպիսկոպոսն հոգասցէ վարդապետական վարժմամբ եւ երկու կամ երեք կատարեալ արամբք ընդ նմա ի դատաստանի: Եւ ի տեղոջ, ուր ոչ իցեն թագաւոր կամ իշխանք, պարտ է զեպիսկոպոսն տալ զսա յասնդ, զի զամենայն դատաստանս նոքա հոգասցեն» (Դատ., էջ 26/:

Վարդապետական դատարանը գլխավորում էր վարդապետը, որի մասին ոչ լրիվ տեղեկություններ կան Գոշի Դատաստանագրքում: Այսպես, Դատաստանագիրքը խոսելով վարդապետների նշանակման կարգի մասին, նշում է նաև վարդապետն իրավունք ունի կիրառել եկեղեցական պատիժներ, մասնավորապես ապաշխարանք. «Եւ թէ պատահիցի վարդապետի գոք կասել յաշխարհականաց եւ կամ յեկեղեցականաց, այլ ոք վարդապետ մի լուծցէ» /Դատ., էջ 89/:

Եվ, վերջապես, եկեղեցական ստորին դատական ատյանը՝ **ծխական քահանայի դատարանն** էր: Այս դատարանի գոյության մասին կարելի է դատել Գոշի Դատաստանագրքի առաջին մասի 1-ին հոդվածից, որը վերաբերում է հոգևոր դատավորների վարձատրության հարցին: Այստեղ նշված է, որ եպիսկոպոսի «վիճակում» /թեմում/ եղած անժառանգ գույքը պետք է երեք մասի բաժանել՝ հայրապետի, եպիսկոպոսի և քահանաների օգտին: Ահա նշված հոդվածի մեզ հետաքրքրող հատվածը. «... Եթէ ի վիճակի եպիսկոպոսի իցէ յերիս բաժանեսցի - հայրապետին եւ եպիսկոպոսին եւ քահանայից ժողովրդեանն» /Դատ., էջ 83/:

Դատաստանագրքի համաձայն, եկեղեցական դատարաններին ընդդատյա էին այն գործերը, որոնք վերաբերում էին եկեղեցու կազմակերպությանը, պաշտամունքին, ծիսակատարությանը, հոգևորականության աստիճանակարգությանը, նրանց անձնական իրավունքներին ու պարտականություններին, գույքային փոխադարձ հարաբերություններին՝ կապված եկեղեցու սեփականության հետ, ծխերի բաժանում, եկեղեցու դատավորների վարձատրություն, ամուսնությանը, ամուսնալուծությանը, ամուսինների անձնական հարաբերություններին, ընտանիքի բարոյականության հարցերին, երեխաների և ծնողների փոխհարաբերությանը, ժառանգական իրավունքին, այն արարքներին, որոնցում բացակայում է, որպես կանոն, մեղքը քրե ախրավական իմաստով և համանման այլ գործերը:

Թե՛ աշխարհիկ և թե՛ հոգևոր դատարաններին դատավորներին Գոշի Դատաստանագիրքը ներկայացնում էր հետևյալ պահանջները, դատավորը պետք է լինի չափահաս, հմուտ, քաջուսումն, հանճարեղ, գիտուն, օրենսգետ, բարի, առաքինի, աննախանձ, ուշիմ, զգաստ, անաչառ, խիստ, հանդուրժողական, անկաշառ և մարդկային այլ դրական հատկանիշներով օժտված անձնավորություն. «Եւ արդ պարտ է դատաւորին հմուտ լինել եւ քաջուսումն, եւ հանճարեղ, եւ գիտուն Սուրբ Գրոց եւ ամենայն մարդկային, զի անախալ զդատաստանս առնիցէ: Պիտոյ է եւ կատարեալ գոյ հասական, եւ ուշիմ, մտաւոր եւ զգաստ, զի մի յոչ իմանալոյ ի հարկէ սխալանս ինչ գործիցի Ուստի պարտ է ամենայնիս գիտուն եւ զգաստ եւ հանճարեղ լինել եւ անաչառ» /Դատ., էջ 25-26/:

Այսպիսով, տեսնում ենք, թե ինչպիսի մեծ պատասխանատվություն է դնում Գոշը դատավորների վրա, ինչ վեհ զգացմունքներ է նա փորձում դատավորներին ներշնչել: Որքան արդիական են հնչում Գոշի պահանջներն ու խորհուրդները դատավորների նկատմամբ, որոնց իրականացումը բավականին դժվար է նույնիսկ արդի ժամանակաշրջանում, ուրեմն որքան դժվար էր, եթե ոչ անհնար, Գոշի ապրած դարաշրջանում:

Եզրակացություն

Հին և միջնադարյան Հայաստանում արդարության և արդարադատության մասին պատկերացումներն ու հայեցակարգային մոտեցումները բավականին զարգացած էին: Դրա մասին են վկայում արձանագրությունները, գրավոր աղբյուրները և իրավական հուշարձանները: Մասնավորապես, հին աղբյուրները հայկական առաջին պետականությունը բնութագրում էին որպես «սրբազան ծեսերի և օրենքների երկիր»: Միջնդարում գոյություն ունեւորված դատական համակարգ՝ աշխարհիկ և եկեղեցական ենթահամակարգերով:

Գառնիկ Հրաչիկի Մաֆարյան՝ ՀՀ ԳԱՊ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի գլխավոր գիտաշխատող՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: Գիտական հետաքրքրությունները՝ իրավունքի պատմություն և տեսություն:

Նորայր Վարուժանի Ստեփանյան՝ ՀՀ ԳԱՊ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ:

Օգտագործված գրականության ցանկ

1. **Ադոնց Ն.** Հայաստանը Հուստիանոսի դարաշրջանում: – Երևան, 1987: – 639 էջ:
2. **Ավագյան Ռ.** Հայ իրավական մտքի զանձարան (մ.թ.ա. IX-XIX): Հատ.1. – Երևան, 2001. – 672 էջ:
3. **Արևշատյան Ա.** Հայաստան. Արարաչագործությունից մինչև երկրորդ Գալուստ: – Երևան, «Աստղիկ Գրատուն», 2005: – 528 էջ:

4. [Բաստամյանց Վ.] Մխիթարայ Գոշի Դատաստանագիր Հայոց, աշխատությանը Վ. ծ.վ. Բաստամյանցի: – Վաղարշապատ, 1880: – 634 էջ:
5. Թովմա Արծրունի և Անանուն: – Երևան, 1978: – 558 էջ:
6. Թովմայի Արծրունոյ Պատմութիւն տանն Արծրունոյ: – Պետերբուրգ, 1887: – 327 էջ:
7. Խաչիկյան Լ. Երզնկայում 1280 թ. կազմակերպված եղբայրությունը: // ԳԱ «Տեղեկագիր», 1951, N12:
8. Ղազինյան Գ. Ս., Վաղարշյան Ա. Գ. Հայոց իրավունքի պատմության հիմնահարցերը: Հին շրջանից մինչև մեր օրերը: – Երևան, ԵՊՀ հրատ., 2014: – 416 էջ:
9. Մանանդյան Հ. Երկեր, հ. Դ. – Երևան, 1981: – 520 էջ:
10. Մատթեոս Ուրհայեցի Ժամանակագրություն: – Վաղարշապատ, 1898: – 373 էջ:
11. Մխիթար Գոշ Առակներ: *Տեքստը ձեռագրերի համեմատությամբ և ներածությունը Էմ. Պոլիսյանի*: – Երևան, 1951: – 136 էջ:
12. Մովսիսյան Ա. Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամյակում (ըստ գրավոր աղբյուրների): – Երևան, ԵՊՀ հրատ., 2005: – 176 էջ:
13. Սահմանադրական մշակույթի արժեքանական ակունքները հայ ժողովրդի հազարամյա պատմության ծալքերում: – Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2020: – 943 էջ:
14. Սամուելյան Խ. Հին հայ իրավունքի պատմություն: Հատոր 1: – Երևան, 1939: – 365 էջ:
15. Սամուելյան Խ. Մխիթար Գոշի Դատաստանագիրքն ու հին հայոց քաղաքացիական իրավունքը: – Վիեննա, 1911: – 348 էջ:
16. Սաֆարյան Գ. Իրավունքի պատմության և տեսության հիմնահարցեր: – Երևան, 2010: – 696 էջ:
17. Սուքիասյան Ա. Մխիթար Գոշը և «Հայոց դատաստանագիրքը»: – Երևան, 1965: – 255 էջ:
18. Ստեփանոս Տարօնեցոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական: – Պետերբուրգ, 1885: – 438 էջ:
19. [Օրբելեան Ստ.] Պատմութիւն նահանգին Միսական, արարեալ Ստեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Միւնեաց: – Թիֆլիս, 1911: – 618 էջ:
20. Галанза П. Н. Феодалное государство и право Германии. – М., 1963. – 45 с.
21. История государства и права зарубежных стран /рабовладельческие и феодальное государство и право. Под ред. П. Н. Галанзы и Б. С. Громакова. – М., 1980. – 552 с.
22. Мирумян К. А. Армянская политическая мысль. Формирование и этапы развития (под. ред. Г.Г. Арутюняна). – Ереван, Изд.во-РАУ, 2021. – 552 с.
23. Сергеевич В. Русские юридические древности. Т.1. – С. Петербург, 1902. – 555 с.
24. Страхов Н. Н. Государство и право феодальной Англии. – Харьков, 1964. – 55 с.
25. Сукиасян А. Г. Общественно-политический строй и право Армении в эпоху раннего феодализма. – Ереван, 1963. – 292 с.
26. Торосян Х. Суд в процесс в Армении X-XIII вв. – Ереван, 1985. – 291 с.
27. Черниловский З. М., Всеобщая история государства и права. – М., 1973. – 638 с.
28. Sempadscher Kodex aus dem 13. Jahrhundert order mottel-armenisches Rechtsbuch, herausgegeben und ubersetzt von Josef Karst, zweiter Band: Kommentar. – Strasburg, 1905: – 368 p.

Տճան/Հանձնվել է՝ 22.10.2024
Рецензирована/Գրախոսվել է՝ 04.11.2024
Принята/Ընդունվել է՝ 11.11.2024